ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏԻ

ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Թ. 00.04-«Սոցիալական փիլիսոփայություն, բարոյագիտություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Է. Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ա.Ե. Մկրտիչյան

փիլիսոփայական գիտությունների
թեկնածու Մ. Հ. Դեմիրճյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական ճարտարագիտական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2012թ. հուլիսի 10 -ին, ժամը, 13.00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. հունիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ փ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ա. Զաքարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը և հրատապությունը: Արդի քաղաքակրթության զարգացման ընդհանուր օրինաչափությունների շրջանակներում տեղի են ունենում այնպիսի փոխակերպումներ, որոնք սոցիալական համակարգերի զարգացումը դարձնում են առավել այլընտրանքային, պարադոքսալ և անկանխատեսելի: Ժամանակակից սոցիալական համակարգերը աչքի են ընկնում վարքի «տարօրինակ» տատանումներով (ֆլուկտուացիա), «երկճյուղավորման» միտումներով (բիֆուրկացիա) և ճգնաժամային դրսևորումներով: Այս ամենի հետևանքով երբեմնի միանաշանակ սոցիալական աշխարհը հարուցում է տարընմբռնումներ ու տարբեր հայեցակարգային մոտեցումներ, որոնք պահանջում են նորովի բացատրել ու մեկնաբանել սոցիալական համակարգերի զարգացման, վերարտադրման ու գործառնության հայտնի օրինաչափություններն ու սկզբունքները: Ազատական-ժողովրդավարական հասարակություններին ներքնապես բնորոշ անկայունությունը, անկանխատեսելիությունը, զարգացման այլընտրանքային հնարավորությունների առկայությունը, ինչպես նաև հետխորհրդային փոխակերպվող երկրների՝ արտաքին ազդակների նկատմամբ ընկալունակությունն ու սոցիոմշակութային պարտադրանքներին ենթակրվելու հակվածությունը հրատապ ու արդիական են դարձնում արդիականության քաղաքակրթական, մարդաբանական և սոցիոմշակութային հակասությունների պարադոքսների ու տարընմբռնումների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն ու պատմության փիլիսոփայական ըմբռնման ժամանակակից հայեցակարգի մշակումը: Սոցիալական համակարգերին ներքնապես բնորոշ պարադոքսները առանձնահատուկ հնչեղություն են ձեռքբերում համակարգայի փոխակերպումների փուլերում, որոնք ունենում են թե՛ կառուցվածքային և թե՛ այլընտրանքային նկարագրության: Մասնագիտական գրականության մեջ պարադոքս եզրույթը շրջանառության մեջ է դրվել ստոիկների կողմից, որի տակ նկատի են ունեցել ինքնատիպ հայացքներ: Այն ունի հունական ծագում և նշանակում է անսպասելի, տարօրինակ, անսովոր, բառացի մեկնաբանությամբ՝ «իրարամերժ կարծիք»: Հաճախ պարադոքս են անվանել այն դատողությունները, որոնք, ըստ էության, լինելով ճշմարիտ հակասել են գոյություն ունեցող տեսակետներին և հենց այդ պատճառով էլ տարօրինակ են թվացել: Գիտական շրջանակներում առավել հայտնի են տրամաբանական, մաթեմատիկական, լեզվաբանական կամ, այսպես կոչված,

բազմությունների տեսության պարադոքսները: Իսկ սոցիալական պարադոքսները քննարկվում են կանտյան իմաստով, իբրև հասարակական միևնույն երևույթների մասին տարաբնույթ ըմբռնումների արտացոլում:

Սոցիալական պարադոքսների և սոցիալական միևնույն երևույթների նկատմամբ տարըմբռնումների հայեցակարգային վերլուծության անհրաժեշտությունը ծագում է հատկապես քաղաքակրթական զարգացումների այն փուլերում, երբ մարդկանց կյանքի սոցիալական գործունեության համատեքստը կորցնում է երբեմնի կայունությունն ու որոշակիությունը, և գործընթացները դառնում են տարերային ու անկանխատեսելի: Առավել ևս, որ սոցիալական պարադոքսներն ու տարըմբռնումները համարվում են մարդկային գործունեության օրինաչափ հետևանքներ:

Մեթոդաբանական իմաստով սկզբունքային նշանակություն ունեցող այս կանխավարկածի համատեքստում գիտական ու գործնական նոր հնչեղություն են ստանում սոցիոմշակութային պարադոքսների ու տարըմբռնումների առաջացման ու դրսևորման սոցիալական, տնտեսական ու քաղաքական ոլորտների տարածաժամանակային հատկությունների, դրանցում գործառնող պարադոքսալ և իրարամերժ սկզբունքների, (սոցիալական նպատակների և դրանց արդյունքների անհամապատասխանություն, ռացիոնալ գործունեության իռացիոնալ հետևանքներ, ազատություն և անազատություն, կարգավորվածություն և քաոս, համաշխարհայնացում և ազգային ինքնիշխանության միտումներ և այլն) հիմնախնդիրների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունները: Հարցադրումների այս շարքն իսկ վկայում է, որ ատենախոսության թեման արդիական է, քիչ հետազոտված և այդ իմաստով՝ նորարարական: Առավել ևս, որ ատենախոսության մեջ քաղաքակրթության զարգացման պարադոքսալ դրսևորումների պատճառներն ու հետևանքները քննարկվում են աշխարհի դասական պատկերը բնութագրող հարացույցների՝ պատմական ռացիոնալության կանխադրույթների ճգնաժամի ու փոխակերպումների համատեքստում:

Արդի քաղաքակրթության համակարգային փոխակերպումները, որոնք ընթանում են ոչ միայն հասարակական համակարգերի հիմնական ոլորտներում ու կառույցներում, այլև սոցիալական սուբյեկտներին բնորոշ մի շարք սոցիալ-հոգեբանական և մշակութային կազմավորումներում, առանցքային նշանակություն ունեն սոցիումի հետագա զարգացման համար: Այդ փոխակերպումների հետևանքով գնալով մեծանում է անորոշության և տագնապի զգացողությունը, քանի որ օրավուր

բացահայտվում են սոցիոմշակութային վերափոխումների ստվերային կողմեր ու հնարավոր սոցիալական «վթարներն» ու դրանց հետևանքները: Ուստի այս համատեքստում կարևորագույն խնդիր է դառնում սոցիոմշակութային պարադոքսների իմաստավորումը, ինչը կարելի է ձևակերպել հետևյալ հարցադրումների տեսքով. 1) սոցիոմշակութային պարադոքսները նո՞ր երևույթներ են, թե՞ հատուկ են մարդկության պատմությանը և ընդամենը նորովի են դրսևորվում, 2) ինչպիսի՞ բնույթ կամ սրվածություն են ձեռք բերում սոցիոմշակութային պարադոքսները համակարգային փոխակերպումների փուլերում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից փոխակերպվող հասարակությունները կանգնած են երկու կարևոր հիմնախնդրի առջև. մի կողմից՝ ձերբազատվել նախկին համակարգային բնութագրերից և նրանց բնորոշ սոցիոմշակութային հիմունքներից, մյուս կողմից՝ ներառվել արդի համաշխարհային գործընթացների մեջ: Մարդկանց մեծ մասին հուզում է այն հարցը, թե ի՞նչ է իրենից ներկայացնում արդի սոցիալական միջավայրը, որտեղ տեղի են ունենում անհատականացման և տիպականացման անընդհատ գործընթացներ, առավել ևս՝ ինչպիսի՞ն է մարդու սոցիալական հեռանկարը համակարգային փոխակերպումների փուլում, և դեպի ու՞ր է գնում մարդկությունը: Այս հարցադրումները մեկ անգամ ևս փաստում են, որ սոցիոմշակութային համակարգերին բնորոշ ներքին փոխակերպումներն ու դրանց հետևանքով առաջացած տարընմբռնումները, արտաքին ազդակների նկատմամբ ընկալունակությունը, զարգացման այլընտրանքային հնարավորությունների առկայությունը և նմանատիպ այլ գործոններ հրատապ ու արդիական են դարձնում սոցիոմշակութային պարադոքսների հետազոտման հեռանկարը: Ի հավելումն ասվածի, պետք է նշել, որ ժամանակակից արևմտյան քաղաքակրթությանը բնորոշ հարացույցներն իրենց արմատական բնույթով խարխլել են սոցիալական կարգը պահպանող հաստատությունների հիմքերը, և այդ հանգամանքը պահանջում է նորովի մեկնաբանել ու վերաիմաստավորել քաղաքակրթական զարգացումների պարադոքսալ հետևանքներն ու տարընմբռնումները:

Համակարգային փոխակերպումների արդի փուլը ձևավորվեց լուսավորականության այն գաղափարների շղարշի ներքո, որոնք կարևորում էին սոցիալական կյանքի ապասրբազանեցման և ապակրոնականացման գործոնը: Այս ամենի նպատակը հասարակության մեջ բանականության, գիտության օգնությամբ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում ռացիոնալ գործողությունների նկատմամբ

վստահություն սերմանելն էր: Բայց սոցիալական աշխարհի ռացիոնալացումը ոչ թե համընդհանուր գիտելիքի աճ էր ենթադրում, այլ ընդամենը փաստում էր, որ բացարձակապես չկան մարդու կյանքի մեջ ներխուժող, գաղտնի, անկանխատեսելի գաղափարներ, և որ մարդը սկզբունքորեն կարող է ռացիոնալ հաշվարկի միջոցով տիրապետել իրերի աշխարհին: Իրատեսական աշխարհայացք դավանող նոր ժամանակի մտածողները պնդում էին, որ ապագային տիրելու համար հարկավոր է ձերբազատվել անցյալի սովորույթներից ու նախապաշարումներից և օգտվելով գիտության ու տեխնոլոգիայի ընձեռած հնարավորություններից՝ աշխարհը դարձնել առավել կանխատեսելի ու կարգավորված: Պետք է նկատել, սակայն, որ ժամանակակից աշխարհը չի համապատասխանում այդ կանխատեսումներին, նպատակներին և իդեալներին: Ավելին, ժամանակակից քաղաքակրթությունը նկատելիորեն շեղվել է նախանշված ուղուց և քաղաքակրթության զարգացման ներկա միտումները ոչ միայն կանխատեսելի ու կառավարելի չեն, այլև սկսել են դուրս գալ ընդհանուր վերահսկողության ու զարգացման հունից և հարուցել ինքնակործանման լուրջ վտանգներ:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Մասնագիտական գրականության մեջ սոցիոմշակութային պարադոքսների հիմնախնդիրը ատենախոսությունում առաջադրված շեշտադրումների տեսանկյունից գրեթե չի քննարկվել: Ավելին, ժամանակակից փոխակերպումների տրամաբանությունն արտացոլող հետազոտություններում և վերլուծություններում նկատվում է սոցիոմշակութային պարադոքսների բովանդակության և գործառույթների պարզեցման և աղքատացման որոշակի միտում: Այս տեսակետից ատենախոսության մեջ փորձ է արվում հաղթահարել այդ միակողմանիությունը՝ տալով առավել ամբողջական նկարագիր:

Համակարգային փոխակերպումների համատեքստում սոցիոմշակութային պարադոքսներին և տարընմբռնումներին առնչվող գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծածավալ տեսական ժառանգություն կա կուտակված թե՛ դասական շրջանում (Կանտ, Հեգել և այլք), և թե՛ արդի իրողություններն ուսումնասիրող հետազոտություններում (Հաբերմաս Յու., Վալերսթայն Ի., Արոն Ռ., Պանարին Ա., Լուման Ն., Նազարեթյան Ա. և այլք), որոնցում, սակայն, առավելապես քննարկվում է հիմնախնդրի այս կամ այն կողմը: Ընդ որում, հաշվի առնելով այն իրողությունը, որ քաղաքակրթական զարգացումների պարադոքսալ հետևանքներն ու տարընմբռնումները հավասարաչափ դրսևորվում են սոցիալական, քաղաքական, մարդաբանական

չափումներում, կարելի է ասել, որ մասնագիտական գրականության մեջ հիմնախնդիրը դիտարկվում է երեք հիմնական տեսանկյուններից.

- սոցիալական (Բերդյաև, Կաստելս, Մանհեյմ, Մյուլեր, Շպենգլեր և այլք),
- քաղաքական (Ադորնո, Արոն, Բելլ, Գիդդենս, Հաբերմաս, Թոյնբի և այլք),
- մարդաբանական (Մարկուզե, Հաբերմաս, Յասպերս, Վեբլեն, Օրտեգա-ի-Գասսետ և այլք):

Ամփոփելով հիմնահարցի հետազոտման արդի վիճակի մասին դիտարկումները, անհրաժեշտ է նկատել, որ ժամանակակից հայ սոցիալ-փիլիսոփայական միտքը ևս այս կամ այն առնչությամբ անդրադարձել է վերափոխումների արդի գործընթացներում հետխորհրդային հասարակություններում ժողովրդավարական և ազատական արժեքների ներդրման արդյունքում ծագած սոցիալական ու քաղաքական պարադոքսներին ու տարընմբռնումներին (Գևորգյան Հ., Պողոսյան Գ., Հարությունյան Էդ., Հովսեփյան Ա., Մկրտչյան Ա., Սողոմոնյան Գ., Ղարագուլյան Ա.), ինչպես նաև արդի քաղաքակրթության հումանիզացման արդյունքների պարադոքսալ դրսևորումներին (Մարգարյան Էդ.):

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Սոցիալական համակարգերի ծրագրավորման և վերակառուցման հաշվարկը չափազանց դժվար խնդիր է, քանի որ, վերջիններս, ի տարբերություն բնական համակարգերի, ավելի ակտիվ են արձագանքում իրականացվող փոփոխություններին, ինչն իր հերթին առաջ է բերում նախանշված նպատակից շեղում, պատասխան չծրագրավորված փոփոխություններ հենց նույն համակարգում: Ատենախոսության նպատակը արմատական և համակարգային փոխակերպումների փուլում սոցիոմշակութային պարադոքսների և տարընմբռնումների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն է, ինչը պահանջում է վեր հանել և վերլուծել սոցիոմշակութային շարժառիթների դերը պարադոքսների ձևավորման և զարգացման գործընթացներում, երբ հասարակական համակարգը, ձգտելով անցում կատարել մի որակական որոշակիությունից դեպի մյուսը, հրաժարվում է նախորդ սոցիոմշակութային հիմունքներից և ձևավորում նորը: Սոցիոմշակութային անորոշությամբ, այլընտրանքայնությամբ, երկվությամբ և հակասականությամբ բնութագրվող հասարակություններում պարադոքսների ուսումնասիրությունը ենթադրում է մի շարք խնդիրներ, որոնք աշխատանքում քննարկվել են սոցիալական փիլիսոփայության համար տեսական ու գործնական առանցքային նշանակություն ունեցող երկու փոխպայմանավորող և փոխլրացնող հիմնահարցերի տեսանկյունից: Քանի որ հիմնախնդիրը բազմաճյուղ և

բազմաբովանդակ է, այդ նպատակով առանձնացվել են ատենախոսության ներքին տրամաբանությունից բխող մի քանի ենթահարցեր.

- Քաղաքակրթության զարգացման պարադոքսալ դրսևորումները:
- Սոցիոմշակութային պարադոքսները որպես համակարգային փոխակերպումների հետևանքներ:

Նշված երկու հիմնահարցերի քննարկման և վերլուծության նպատակով սոցիոմշակութային պարադոքսների առանձնահատկությունների հետազոտման խնդիրները կարելի է ձևակերպել հետևյալ տրամաբանությամբ.

- ուսումնասիրել սոցիամշակութային շարժառիթներով պայմանավորված պարադոքսների կոնկրետ ձևերն ու դրսևորումները, դրանց հիմքում ընկած էական հակասությունները՝ դրանք դիտարկելով որպես սոցիալական իրականության յուրացման և վարքի դրսևորման մեխանիզմներ,
- պարզաբանել արդի տեխնածին քաղաքակրթության համատեքստում սոցիոմշակութային պարադոքսների գործառնական առանձնահատկությունները,
- բացահայտել սոցիալական նպատակների և արդյունքների, իդեալների և իրողությունների, լինելու և ունենալու անհամապատասխանության պատմական և հասարակագիտական նախապայմանները,
- արդիականության սոցիալ-փիլիսոփայական ըմբռման համատեքստում վերլուծել ազատականության և ժողովրդավարության քաղաքական տարընմբռնումների և պարադոքսների դրսևորման հիմնական միտումները,
- քննարկել համաշխարհայնացման արդի գործընթացներում ուրվագծվող սոցիոմշակութային այլընտրանքների քաղաքակրթական հեռանկարները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել պատմահամեմատական, վերլուծական և կառուցվածքաբանական մեթոդները, ինչը հնարավորություն է տվել սոցիոմշակութային պարադոքսների գործառնական առանձնահատկությունները քննարկել արդի փոխակերպումների ներքին օրինաչափությունների համատեքստում: Տեսական հետազոտության համար կարևոր դեր է հատկացվել նաև սոցիալ-փիլիսոփայական ընդհանուր մեթոդաբանական սկզբունքներին ու եղանակներին, որոնք նպաստել են հիմնախնդրի ընդհանրացմանը: Ատենախոսության տեսական բազան համակարգային փոխակերպումների և սոցիոմշակութային պարադոքսների մասին սոցիալ-փիլիսոփայական,

սոցիոլոգիական, քաղաքական և մշակութաբանական այն հետազոտություններն են հանդիսացել, որոնցում առկա ընդհանրացումներն ու եզրակացությունները սկզբունքային նշանակություն ունեն հիմնախնդրի սոցիոմշակութային հետազոտության համար: Մեթոդաբանական և տեսական հիմք են հանդիսացել նաև արմատական և համակարգային փոխակերպումների, ինչպես նաև պարադոքսների և տարըմբռնումների վերաբերյալ սոցիալ-փիլիսոփայական, սոցիոլոգիական, քաղաքագիտական և այլ հետազոտությունների տեսական այն եզրակացությունները, որոնք սկզբունքային նշանակություն ունեն արդի հասարակությունների գործառնության, վերարտադրման, զարգացման օրինաչափությունների ու ներքին փոխակերպումների յուրահատկությունները հասկանալու համար:

Ատենախոսության գիտական նորույթը: Փոխակերպվող հասարակություններում սոցիոմշակութային պարադոքսների վերլուծության հիմնահարցը սոցիալ- փիլիսոփայական գրականության մեջ դեռևս համակարգված, համակողմանի քննարկված և հետազոտված չէ: Այս իմաստով փորձ է արվել վերհանել և ամբողջացնել փոխակերպվող հասարակություններում պարադոքսների և տարըմբռնումների, ինչպես նաև դրանց առաջացման շարժառիթների հետ առնչվող հիմնահարցերը: Այս համատեքստում արվել են տեսական ու գործնական նշանակություն ունեցող մի շարք ընդհանրացումներ ու եզրակացություններ: Մասնավորապես.

- Թեև սոցիալական համակարգերի արմատական փոխակերպումներն իրականացվում են նախապես ծրագրավորված և նպատակադրված, և դրանք բխում են տվյալ համակարգի զարգացման ներքին օրինաչափություններից, այնուամենայնիվ ցանկացած փոխակերպում և սոցիալական ցանկացած գործընթաց ներքնապես պարադոքսալ է և հարուցում է տարըմբռնումներ: Վերջիններիս երևան գալն, այլ առարկայական խնդիրների հետ միասին արտացոլում է այդ հասարակություններում առկա «վթարային» իրավիճակը, ինչպես նաև վերոհիշյալ երևույթների հաղթահարման այլընտրանքային հնարավորությունների առկայությունը:
- Յուրաքանչյուր հասարակություն գործառնում է իրեն բնորոշ սոցիոմշակութային արժեհամակարգի տիրույթում, ինչի

համատեքստում առանձնակի նշանակություն ունեն սոցիալական իդեալները որպես սոցիալական նպատակների ընտրության և իրականացման նախատիպ: Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգային փոխակերպումների համատեքստում սոցիոմշակութային պարադոքսների առկայությունը ստեղծում է մի իրավիճակ, երբ լավագույն իդեալներով (օրինակ, բազմակողմանի, ներդաշնակ անհատի ձևավորում) առաջնորդվող հասարակության արդյունքը դառնում է, տնտեսակենտրոն-զանգվածային մարդը՝ կյանքի ու ապրելակերպի շարժառիթների ընդգծված շուկայական բնույթով:

- Արդիականությունը վերլուծելով պատմական և քաղաքակրթական տեսանկյուններից և անդրադառնալով դրա քաղաքական (ինքնիշխանություն, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն և այլն) և տնտեսական (մրցակցություն, շուկայական հարաբերություններ, ազատ ձեռներեցություն և այլն) ինստիտուտների ձևավորման հիմնահարցերին՝ ատենախոսության մեջ արտացոլվել են արդի քաղաքակրթության սոցիոմշակութային կյանքում տեղի ունեցող այն փոխակերպումները (ապակրոնականացում, սոցիալական գործողությունների ռացիոնալացում, մշակույթի ձևայնացում և այլն), որոնց հետևանքով փոփոխվում և նոր գործառույթներ են ձեռք բերում նաև սոցիոմշակութային տարրմբռնումները:
- Ատենախոսության մեջ առաջ է քաշվել այն գաղափարը, որ արդի հասարակական հարաբերությունների տեղեկատվական վերազինման պայմաններում սոցիոմշակութային տարրմբռնումները ձեռք են բերում խճանկարայնություն, այլընտրանքայնություն և այլն: Տեխնածին քաղաքակրթության տարրմբռնումային դրսևորումներն այս առումով հնարավորություն են տալիս արդի նվաճումները մի կողմից դիտարկել որպես տարրմբռնումների կոնկրետ դրսևորումներ, մյուս կողմից՝ որպես սոցիալական ներգործության արդյունավետ մեխանիզմներ, որոնց օգնությամբ ձևավորվում է սոցիալ-քաղաքական մանիպուլյացիաների հեշտությամբ ենթարկվող ժամանակակից մարդը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Աշխատանքի մեջ առաջադրված հարցադրումներն ու կատարված եզրակացություններն ունեն տեսական և կիրառական նշանակություն և կարող են՝

- լրացնել արդի փոխակերպումների սոցիամշակութային պարադոքսների սոցիալ-փիլիսոփայական մեթոդաբանության զինանոցը,
- նպաստել փոխակերպումների հետևանքով առաջացած սոցիամշակութային պարադոքսների մասին առավել ամբողջական և համակարգված տեսակետների ամրապնդմանը,
- պարզաբանել արդի ազատական հարաբերությունների ոչ-ազատական դրսևորման պատճառներն ու հետևանքները,
- հարստացնել սոցիալական փիլիսոփայությունը՝ դարձնելով այն առավել արդիական:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնում (2011, հոկտեմբեր): Ատենախոսության ամբողջական շարադրանքը քննարկվել և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության նույն ամբիոնում (2012, ապրիլ): Ատենախոսության հիմնական դրույթներն ու գաղափարները քննարկվել են ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի «Արդիականության հոգևոր ճգնաժամը և նրա դրսևորման առանձնահատկությունները հայոց փոխակերպվող սոցիումում» պետական ֆինանսավորմամբ կատարվող գիտական թեմայի շրջանակներում, ինչպես նաև «Առողջ հասարակություն» խորագրով ասպիրանտ-գիտնականների գիտաժողովում (Ծաղկաձոր, 2004թ. դեկտեմբերի 16-19): Ատենախոսության հիմնական գաղափարներն ու դրույթներն ամփոփված են գիտական տարբեր հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը պայմանավորված են առաջ քաշված խնդիրներով և նպատակներով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (6 ենթագլուխներով), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 145 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, հիմնահարցի մշակվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակները, խնդիրները և մեթոդաբանական սկզբունքները: Ներկայացվել է ատենախոսության գիտական նորույթը, ինչպես նաև տեսական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ «Քաղաքակրթության զարգացման պարադոքսալ դրսևորումները», նվիրված է ռացիոնալության և տեխնածին քաղաքակրթության պարադոքսալ դրսևորումներին, ինչպես նաև սոցիալական նպատակների և արդյունքների անհամապատասխանության սկզբունքի սոցիալ-փիլիսոփայական վերլուծությանը:

«Սոցիալական նպատակների և արդյունքների անհամապատասխանության սկզբունքը» ենթագլխում քննարկվում է այն մոտեցումը, ըստ որի մարդկության պատմության զարգացումը պարադոքսալ է այն պատճառով, որ գրեթե բոլոր դարաշրջաններում մարդկությունը ձևակերպում է իր զարգացմանը ծառայող խնդիրներն ու նպատակները (օրինակ՝ ներդաշնակ ու բազմակողմանի զարգացում, ռացիոնալ արարք և այլն), բայց արդյունքում, որպես կանոն, ստացվում է մի իրավիճակ, որը չի համապատասխանում նախնական նախագծին: Գիտական վերլուծության տեսակետից այս մոտեցումը հնարավորություն է տալիս պատմական զարգացման պարադոքսներն ու տարընթերումները մեկնաբանել որպես քաղաքակրթական գործընթացներին ներքնապես բնորոշ ֆենոմեն: Ուստի պատմական գործընթացներին պետք է մոտենալ ոչ թե «վերջնական նպատակի» տեսակետից, այլ շարժման մեխանիզմների, քանի որ «մարդկանց նպատակները» «պատմության նպատակների» հետ նույնացնելը կարող է կործանարար հետևանք ունենալ, ինչպես դա պատահեց խորհրդային համակարգի պարագայում: Խնդիրն այն է, որ սոցիալական համակարգերի ապագան ամենևին էլ նախորդ իրադարձությունների (պատճառների) կանխորոշված հանրագումարը չէ: Այս առնչությամբ առաջարկվում է այն թեզը, ըստ որի սոցիալական պարադոքսների ծագման ու գործառնության պատճառներից մեկը (եթե ոչ գլխավորը) սոցիալական գործընթացների ընթացքի և համակարգի ներքին փոփոխությունների արդյունքում ծագած երկընտրանքներն են (բիֆուրկացիոն կետեր), որի դեպքում համակարգի հետագա ճակատագիրը դառնում է անորոշ և այլընտրանքային:

«Ռացիոնալության պարադոքսները հետարդիականության համատեքստում» ենթագլխում վերլուծվել են պատմության մոդեռնիստական հայեցակարգի արժեհամակարգի առանձնահատկությունները և վեր հանվել աշխարհի դասական պատկերի ճգնաժամի պատճառները: Հիմնավորվել է այն թեզը, որ մոդեռնիզմին բնորոշ ռացոնալության կանխադրույթները պատմությանը հաղորդում են նպատակաբանական բնույթ, այն դարձնում բանական, կանխատեսելի և երջանիկ ավարտին տանող գործընթաց: Բանականության և ռացիոնալ նպատակների նկատմամբ անսահման հավատը, որն, ի տարբերություն ավանդական, սովորույթների վրա կառուցված հասարակության, ենթադրում էր բոլորովին այլ ոճ, ըստ որի արդիականությունը կդառնա առավել կարգավորված ու կանխատեսելի: Բայց արդի քաղաքակրթության զարգացման պատմությունը խարխլեց ռացիոնալության դասական ներդաշնակությունը և զետեղեց աշխարհի սկզբունքորեն ուրիշ պատկեր, որը մինչ օրս չի արտահայտվել սոցիալ-պատմական արդիականացված տեսության համակողմանի եզրույթներով: Չնայած ռացիոնալությունը արդիականության կարևորագույն բնութագրերից մեկն է, այնուամենայնիվ, նրա սահմանման և էության ըմբռնման հարցում միասնական մոտեցումներ չկան: Այս հասկացության շուրջ միասնականության, միանշանականության հանգելու եղած փորձերը լիովին հիմնավորված չեն, քանզի նրանցում առկա են բազմապիսի որակումներ և հակասություններ, որոնց արդյունքում ծագում են մի շարք սոցիոմշակութային տարընմբռնումներ: Ռացիոնալությունը վերաբերում է որոշակի մտածելակերպի և վարվելակերպի, ինչը ներառում է սոցիալական կյանքի շատ կողմեր, այլ կերպ ասած՝ ռացիոնալությունը բարդ ու բազմաբովանդակ գործընթաց է, որը ձևավորվում է ոչ այնքան որպես տեսական համակարգ, որքան՝ գաղափարախոսական շարժում: Բանականության նկատմամբ հավատը, թեև կոչված է ապահովելու մարդկության առաջընթացը, ոչ այնքան «բնածին գաղափարների» ամբողջություն է, որքան իրերի բացարձակ էության արտահայտություն, որը ոչ թե տիրապետում է ենթադրում, այլ նվաճում, յուրացնում: Այսինքն՝ ռացիոնալությունը ստանում է երկակի կարգավիճակ. մի կողմից՝ ընկալվում է որպես իմացության բարձրագույն աստիճան, մյուս կողմից՝ մեկնաբանվում է գործիքային իմաստով՝ որպես ճշմարտության ձեռք բերման միջոց: Ռացիոնալության իդեալներն ու սկզբունքները նախանշել են մի նախագիծ, ծրագիր, որի նպատակը աշխարհի կախարդազերծումը, ապասրբազանեցումը, դիցերի

կազմալուծումը և ռացիոնալ գիտելիքի օգնությամբ մարդկային երևակայության մեջ շրջադարձ կատարելն էր:

Սոցիալական իրականության ռացիոնալացման գործընթացների առանձնահատկության մեկնաբանությունը այն է, որ ի սկզբանե կապվում է իշխանության հիմնահարցի հետ, քանզի ռացիոնալացման նպատակը ինչպես մարդու ներքին, այնպես էլ արտաքին բնությանը տիրելն է, վերջինիս նկատմամբ անսահմանափակ իշխանություն ապահովելը: Այս տեսանկյունից պարզ է դառնում, որ աշխարհի, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների ռացիոնալացման նպատակը իշխանության կամքին ենթարկելու գործընթաց է: Այն դեպքում, երբ բանականությունը դառնում է գործիքային, պարզվում է, որ նրա հասկացությունները և նորմերը ոչ թե դառնում են ազատագրման միջոցներ, այլ իշխանության պտուտակներ՝ նախատեսված մարդկանց համար: Ռացիոնալությունը (ամենալայն իմաստով), որպես մտքի առաջխաղացում, միշտ նպատակ է ունեցել մարդկանց ազատել վախերից և հաստատել նրանց ինքնավարությունը: Բաց և այնպես, ինչպես ցույց են տալիս արդի քաղաքակրթության զարգացման արդյունքները, լուսավորված երկիրը ճառագայթում է աղետալի «հաղթանակով», նկատի ունենալով նրա արդյունքների պարադոքսալությունը:

«Տեխնածին քաղաքակրթության պարադոքսալ հետևանքները» ենթագլուխը նվիրված է տեխնածին քաղաքակրթության անհամաչափ զարգացման միտումների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությանը, ուր տեխնոլոգիական կենսակարգի համատեքստում մեկնաբանվել են սոցիոմշակութային պարադոքսների ու տարընմբռնումների մարդաբանական ու բարոյա-հոգեբանական հիմունքները:

Ժամանակակից հասարակության մեջ տեղեկատվությունն այնքան վճռական նշանակություն և դերակատարություն ունի, որ դարձել է նոր տիպի հասարակության կերտման նախապայման: Տեղեկատվության քանակական հոսքերը հանգեցնում են նաև՝ կյանքի ոճի և ռիթմի փոփոխության: Այսինքն, տեղեկատվական նորարարության նման ծավալները ենթադրում են սոցիալական կյանքի հիմնովին վերակառուցում, քանի որ վերջինս նշանակալի ազդեցություն է թողնում հասարակության վրա: Տեղեկատվական հասարակությանը բնորոշ պարադոքսների և տարընմբռնումների առանձնահատկություններից մեկն այն է, որ ազատական մշակույթը թեև ազատ ընտրության հնարավորություն է ընձեռում, բայց և ավելի վերահսկելի է դարձնում նրանց կյանքը և ապրելակերպը:

Ժամանակակից աշխարհում թե՛ շուկայի, և թե՛ անմիջական արտադրության ոլորտում տեղեկատվական ցանցերի համընդհանուր տարածումը միանշանակ գնահատվող գործընթաց չէ, քանի որ ազգային պետությունների համար մեծ վտանգ է պարունակում: Որքան էլ ճգնաժամը սպառնալից է ազգային պետությունների համար, այնուամենայնիվ այլընտրանք չկա, քանի որ արևմտյան քաղաքակրթության կառույցներին անդամակցությունը նախանշում է ինչպես համընդհանուր դիրքորոշման ձևավորում, այնպես էլ խաղի կանոնների համաձայն պատասխանատվության ստանձնում: Իսկ այդ ամենը չպետք է ենթադրի փախուստ դեպի ինքնության խորքերը (Փոքր Միերի օրինակով, ով Ագռավաքարում փակված սպասում է մինչև աշխարհը փոխվի և վերակառուցվի), այլ ընդհակառակը՝ կենսաշխարհի պատմական ապրիորիների վերանայում՝ ժամանակին համապատասխան վերաիմաստավորելու և փոխակերպելու նախապայմանով:

Վերլուծելով տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում նույնականության ճգնաժամի պատճառներն ու հետևանքները, ատենախոսության մեջ անդրադարձ է կատարվել ժամանակակից մարդաբանական նոր տիպերի (թափառաշրջիկ, խաղամոլ, զբոսաշրջիկ, դատարկաշրջիկ) ձևավորմանը:

Այսպիսով, արդի տեխնածին քաղաքակրթության զարգացման ներկա վիճակը վկայում է, որ այդ գործընթացները, իբրև օբյեկտիվ իրողություններ, մարդկանց և առանձին հանրույթներին ստիպում են ընդօրինակել իրենց հնարավորություններին և էթնոմշակութային ավանդույթներին ոչ համարժեք չափորոշիչներ և արժեքային կողմնորոշիչներ, ինչը խարխլում է հասարակության ներքին համախմբվածությունը, նույնականությունը, կազմակերպվածությունը: Բանն այն է, որ հասարակական կյանքի կազմակերպման ժամանակակից մշակույթը մի կողմից մարդուց պահանջում է ստեղծագործական ակտիվություն և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, իսկ մյուս կողմից՝ նրան դարձնում է տեխնիկայի կցորդ: Նյութական պահանջմունքների գերիշխանության ժամանակաշրջանում տեխնածին քաղաքակրթությունն աստիճանաբար փոխակերպվում է սպառման հիմքի վրա ձևավորվող քաղաքակրթության: Ուստի ակնհայտ է դառնում, որ զանգվածային-սպառողական հասարակություններում մի կողմից ընդլայնվում են մարդկանց ազատության շրջանակներն ու հնարավորությունները, մյուս կողմից՝ խորանում են հասարակական կապերն ու կախվածությունները, ինչի արդյունքում, ի վերջո, ձևավորվում են տոտալ վերահսկողության տակ հայտնված, «թափառաշրջիկ» ու մշտապես մանիպուլյացիայի ենթարկվող մարդկանց հոծ զանգվածներ:

Ատենախոսության երկրորդ՝ «Սոցիոմշակույթային պարադոքսները որպես համակարգային փոխակերպումների հետևանքներ» գլխում վերլուծվել են սոցիալական պարադոքսների սոցիոմշակութային առանձնահատկությունները, այս համատեքստում մեկնաբանվել են հետարդիականության և փոխակերպվող հասարակությունների զարգացման միտումները, ազատականության և ժողովրդավարության ներքին հակասությունների և տարընմբռնումների հիմնահարցերը:

«Սոցիոմշակութային պարադոքսների առանձնահատկությունները» ենթագլխում վերլուծվում են սոցիոմշակութային այլընտրանքներից ածանցյալ սոցիոմշակութային պարադոքսների բովանդակությունը և դրանց առանձին դրսևորումները: Ընդհանրացված տեսքով դրանք կարելի է բնութագրել որպես համաշխարհայնացման և ինքնիշխան գոյատևման անհրաժեշտության, բազմաբևեռ և միաբևեռ աշխարհի, ազատական և ժողովրդավարական արժեքների, բազմակողմանի և միաչափ մարդու, սոցիոմշակութային միակերպության և խճանկարայնության, ազատության և տոտալ վերահսկողության պարադոքսալ փոխհարաբերությունների միտումներ: Հետխորհրդային հասարակությունների սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում շուրջ երկու տասնամյակ տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ, որոնց ընթացքը և արդյունքները մեծապես պայմանավորված են հասարակական կարգի ձևավորման, ինստիտուցիոնալ նոր կառույցների կազմակերպման, հասարակության մշակութային ու քաղաքական ոլորտների արդիականացման յուրահատկություններից: Սակայն, անցումային հասարակությունների այս տարիների փորձը ցույց է տալիս, որ չկա փոխակերպումների տրամաբանությունը բնութագրող մեկ միասնական հայեցակետ: Նախորդ սոցիալական կարգի փլուզման և նորի լինելիության ճանապարհին խախտվում են անհրաժեշտության և նպատակահարմարության, հնարավորությունների ու հավակնությունների բևեռները, որոնք, իրենց հերթին, հարուցում են մի շարք պարադոքսալ իրավիճակներ: Բանն այն է, որ փոխակերպվող հասարակություններում հայտնված մարդիկ, որպես կանոն, գործում ու գործառնում են սոցիոմշակութային տարբեր չափումներում՝ ստեղծելով գործառնական երկիշխանություն: Սոցիալական համակարգի գործառնության, վերարտադրության և զարգացման նախորդ կարգին զուգահեռ ձևավորվում են նաև նորերը և հասարակական կյանքը կորցնում է իր երբեմնի գործառնական որոշակիությունը, ինչի հետևանքով սոցիալական համակարգի փոխակերպումները

ստանում են ինչպես կառուցվածքային, այնպես էլ ապագործառնական բնույթ: Դրանք, մի կողմից, ընդլայնում են հասարակության օրգանական միասնության հնարավորությունները, մյուս կողմից՝ նպաստում հասարակական կյանքի խճանկարայնացմանը: Ելնելով այդ իրողությունից, կարելի է ասել, որ հետխորհրդային փոխակերպումների զարգացման մեխանիզմներում սոցիոմշակույթային տարընմբռնումները երկակի դեր են խաղում: Մի կողմից նրանք արտացոլում են ինստիտուցիոնալ բարեփոխումների սոցիալական արդյունքները, մյուս կողմից՝ հասարակությանը նախապատրաստում սոցիալական նոր փոխակերպումների: Այսպիսով, սոցիոմշակութային պարադոքսները և տարընմբռնումները միաժամանակ արտացոլում են ինչպես ավարտված փոխակերպումների արդյունքները, այնպես էլ առկա փոխակերպումների մեկնարկային պայմանները: Համակարգային փոխակերպումների արդյունքում սոցիալական սուբյեկտների փխհարաբերություններում ձևավորվում են իրականության ընմբռնման կամ արժևորման երկու տարբեր, փոխբացառող ձևեր, որոնք կարելի է համարել հասարակության այլընտրանքային զարգացման հնարավորություններ, սակայն այս տարամետ ընմբռնումների առկայությունը, ինչը պայմանավորված է հասարակության մեջ առկա տարբեր սոցիալական գաղափարների փոխազդեցությամբ ու պայքարով, չի նպաստում ներհասարակական համերաշխությանն ու ինքնակազմակերպմանը:

Ուստի տվյալ համատեքստում կարևորագույն խնդրակարգերից է դառնում սոցիոմշակութային տարընմբռնումների և պարադոքսների իմաստավորումը: Այս հիմնախնդիրը լայն իմաստով կարելի է ձևակերպել հետևյալ հարցադրումների տեսքով. փոխակերպումների համատեքստում ի՞նչ առանձնահատկություններով են բնութագրվում սոցիոմշակութային պարադոքսները: Արդյո՞ք գոյություն ունեն սոցիոմշակութային պարադոքսների լուծման ուղիներ, թե այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ այնքան լուծմանը, որքան մի պարադոքսը մյուսով հաղթահարելուն:

«Ազատականության պարադոքսները արդիականության համատեքստում» ենթագլխում սոցիոմշակութային պարադոքսների բովանդակային վերլուծության համատեքստում անդրադարձել է կատարվել արդի արևմտյան քաղաքակրթության համակարգաստեղծ ու համակարգապահպան արժեհամակարգը ներկայացնող ազատականության պարադոքսների ու տարընմբռնումների սոցիալ-փիլիսոփայական իմաստավորմանը: Ժամանակակից արևմտյան քաղաքակրթության պարադոքսալ զարգացման ինքնատիպ դրսևորումներն

ընդհանրական իմաստով կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. գլոբալացում-ազգի ինքնիշխանություն, բազմակարծություն-միաչափություն, հնարավորությունների աճ-ազատությունների սահմանափակում, մշակութային պարտադրանք-միջմշակութային երկխոսություն և այլն: Հիշյալ իրարամերժ գործընթացների վերլուծության արդյունքում, մարդկային կեցության պայմանների բազմազանության պարագայում, քաղաքացին ստիպված է հարաբերակցել իր հնարավորություններն ու ցանկությունները կյանքի կոչող և, միաժամանակ, սահմանափակող նորմատիվ այլ համակարգի հետ, ինչը նրան թելադրվում է քաղաքական համակարգի կողմից:

«Քաղաքական պարադոքսների յուրահատկությունները փոխակերպվող հասարակությունում» եզրափակիչ ենթագլխում քաղաքական պարադոքսները քննարկվել են թե' էվոլուցիոնիստական և թե' հեղափոխական փոփոխությունների համատեքստում, որոնք պատճառաբանված են կառուցվածքային գործոններով՝ չհանդիսանալով ինքնին ոչ լավ, ոչ էլ վատ սոցիալական գործողություն, այլ ավելի շուտ փոխակերպումների գործառնական և ապագործառնական հետևանքներ: Իբրև քաղաքական պարադոքսների սկզբնաղբյուր հանդես են գալիս անհատները, խմբերը, հանրույթները, որոնք հետապնդում են սեփական շահեր: Երբ հասարակական կազմակերպման հիմնական գործին մասնակցում են մեծ քանակությամբ մարդիկ, այդ գործընթացները չեն կարող հակասություններ չպարունակել, որոնք երբեմն ստանում են պարադոքսալ դրսևորում: Վերջիններս հասարակության զարգացման բնական և անխուսափելի գործոններից են, առանց որոնց սոցիալական համակարգի կառուցվածքային տարրերի միջև փոխազդեցությունը կբացակայեր կամ էլ կստանար գծային նկարագրություն: Բացառված է երբևիցե մի այնպիս վիճակ, երբ հասարակության մեջ իշխի բացարձակ միակարծություն, միատեսակ շահեր ու գաղափարներ, միատեսակ ընդունակություններ, կարողություններ, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ հասարակության մեջ պարադոքսներ միշտ էլ լինելու են: Ուստի վերլուծելով հետարդիականության և փոխակերպվող հասարակությունների զարգացման միտումները, կարելի է եզրակացնել, որ ազատականության և ժողովրդավարության կյանքի կոչման ընթացքում ի հայտ են գալիս սոցիալական բնույթի հակասություններ:

Եզրակացություն

Ատենախոսության մեջ իրականացված հետազոտությունները թույլ են տալիս կատարել համակարգային փոխակերպումների փուլում առանձնահատուկ հնչեղություն ձեռք բերած պարադոքսների, դրանց ընթացքի, կոնկրետ դրսևորումների և առանձնահատկությունների վերաբերյալ հետևյալ եզրահանգումները.

- Արդի քաղաքակրթության սոցիալական իրականությունը բնութագրվում է իրարամերժ գործընթացներով. մի կողմից՝ տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային ոլորտների զարգացման, հաղորդակցման նոր տեսակների առաջացման և սոցիալական կապերի ընդլայնման շնորհիվ սոցիալական աշխարհը դառնում է առավել ամբողջական, միասնական ու միասեռ, ինչի հետևանքով համամարդկային են դառնում նաև ժամանակակից մարտահրավերները, մյուս կողմից՝ ազգային և անհատական կյանքի ապակենտրոնացման միտումները, ենթամշակութային «աշխարհների» ինքնաբավ գոյության հնարավորություններն ու խճանկարայնությունն ուժեղացնում են առանձին սոցիումների բաժանման ու տարանջատման գործընթացները:
- Հասարակական կյանքի զարգացման «ներքին» շարժառիթները պայմանավորված են սոցիալական որոշակի նպատակներով, կայունության ու կարգավորվածության, համակեցության ու անձնական կյանքի ինքնիշխանության, սոցիալական աշխարհի ռացոնալացման և ազատության սահմանների ընդլայնման մարդկային բնական և բանական պահանջմունքներով: Բայց քաղաքակրթության զարգացման ողջ պատմությունը պարադոքսալ է հենց այն պատճառով, որ, որպես կանոն, գործում է սոցիալական նպատակների և դրանց արդյունքների անհամապատասխանության սկզբունքը: Ինչպես վկայում է պատմությունը, կառավարելի ու կանխատեսելի, ռացիոնալ ու կարգավորված աշխարհ ունենալու սոցիալ-քաղաքական գրեթե բոլոր նախագծերն ու հայեցակարգերը, ի վերջո առաջացնում են այնպիսի խնդիրներ ու մարտահրավերներ, որոնք ոչ միայն տարընմբռնումներ են հարուցում, այլև հակասում են սոցիալական նախագծերի բուն էությանը:
- Սոցիալական իրականության դասական պատկերը կառուցված էր պատմական ռացիոնալության այն կանխադրույթի վրա, համաձայն որի

պատմությունն ունի երաշխավորված վերջաբան, հասարակական կյանքի ոլորտները զարգանում են որպես համաձայնեցված համախումբ, պատմական դրաման մշտապես երջանիկ ավարտ ունի և այլն: Բայց ինչպես ցույց են տալիս հետարդիականության զարգացման միտումները, ներդաշնակության մասին դասական-ռացիոնալիստական ըմբռնման, ինչպես նաև պատմական առաջադիմության մոդեռնիստական հայեցակարգերի գլխավոր բացթողումն այն էր, որ հաշվի չէին առնում «պատմության խորամանկությունները» և սոցիալական կյանքի զարգացումը դիտարկում էր որպես բանականությամբ նախասահմանված և կանխորոշված գործընթաց:

- Համակարգային փոխակերպումների համատեքստում սոցիոմշակութային պարադոքսների իմաստավորումը հնարավորություն ընձեռնեց վերլուծել և նորովի մեկանաբանել սոցիալ-փիլիսոփայական հարցադրումների և հետազոտությունների առկա և հետագա սահմանները: Արդի դարաշրջանում հասարակության կառավարման ու մարդկային հարաբերությունների կարգավորման միջոցները ենթարկվում են անընդհատ վերափոխումների: Ավանդական-փակ հասարակություններից ազատական-ժողովրդավարական հասարակությունների անցման և արևմտյան քաղաքակրթության մեջ ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր փոխակերպումների նպատակը մարդկանց վարքի ծրագարավորումն ու ցանկալի հունի մեջ դնելն է: Փակ հասարակություններում իշխանությունը չունի մարդկանց գիտակցության վրա ներգործելու և իր լեգիտիմությունը հաստատելու մեծ անհրաժեշտություն, քանի որ կանխորոշված է: Մինչդեռ արդի ժողովրդավարական հասարակություններում մարդկանց հայացքների և համոզմունքների վրա վերահսկողություն սահմանելու համար իշխանությունները ստիպված են գործադրել զանգվածային ներշնչման առավել ազատական մեխանիզմներ, որոնց նպատակներից մեկն էլ քաղաքացիական ակտիվության անկումն է:
- Տեխնածին քաղաքակրթության զարգացման ու փոխակերպումների արդի միտումների վերլուծությունները ցույց են տալիս, որ տեղեկատվության ժամանակակից միջոցները նախանշում են գիտելիքի որոշակի մակարդակ, մարդու և հասարակության իրազեկվածության ցուցանիշ, առանց որի հնարավոր չէ կողմնորոշվել տեղեկատվական տարածության մեջ: Տեղեկատվության տարածումը և փոխանակումը վկայում է, որ արդի հասարակություններում ընթանում են տեղեկատվական նոր համակարգերի ներդրման գործընթացներ, ինչը՝ ենթադրում է վերահսկողության բարձր

մակարդակ: Քննարկելով տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում նույնականության ճգնաժամի պատճառներն ու հետևանքները, առանձնացվել են ժամանակակից մարդու մարդաբանական նոր տիպեր (թափառաշրջիկ, խաղամոլ, զբոսաշրջիկ, դատարկաշրջիկ), որոնց ինքնադրսևորման հիմնական վայրը զանգվածային-սպառողական սոցիալական միջավայրն է: Վերջիններս, մի կողմից ընդլայնում են մարդկանց ազատության շրջանակներն ու հնարավորությունները, մյուս կողմից՝ խորանում են հասարակական կապերն ու կախվածությունները, ինչի արդյունքում, ի վերջո, ձևավորվում են տոտալ վերահսկողության տակ հայտնված, մարդկանց հոծ զանգվածներ: Արդի տեխնածին քաղաքակրթությունը անձի ինքնավար-ինքնիշխան էությանը պարադոքսալ բնույթ է հաղորդել: Մի կողմից՝ կյանքի կազմակերպման ժամանակակից մշակույթը մարդուց պահանջում է ստեղծագործական ակտիվություն և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, մյուս կողմից՝ նրան դարձրել է հեշտ փոփոխվող պտուտակ և ինստիտուցիոնալ կառույցների կցորդ: Կյանքի պայմանների միջինացումը, պահանջմունքների և հետաքրքրությունների ստանդարտացումը մարդկանց արտադրական և կենցաղային պայմաններին, մտածողությանն ու ճաշակին հաղորդում են միակերպություն և նպաստում միասեռ զանգվածի ձևավորմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում:

1. *Ռացոնալության պարադոքսները հետարդիականության համատեքստում,* «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» (Գիտական հոդվածների ժողովածու), Պրակ 2, Երևան, Լիմուշ., 2006, *էջ 36-47:*
2. *Սոցիոմշակութային պարադոքսների իմաստավորումը փոխակերպումների համատեքստում,* «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» (Գիտական հոդվածների ժողովածու), Պրակ 3 Երևան, Լիմուշ, 2007,էջ 58-67:
3. *Սոցիոմշակութային պարադոքսների առանձնահատկությունները,* «Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ» (Գիտական հոդվածների ժողովածու), Պրակ 4, Երևան, Լիմուշ, 2008, էջ 47-57:
4. *Քաղաքական պարադոքսների յուրակերպությունները փոխակերպվող հասարակությունում,* «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» (Գիտական հոդվածների ժողովածու), Պրակ 5, Երևան, Լիմուշ, 2008, էջ 51-60:

5. *Ազատականության պարադոքսները արդիականության համատեքստում,* «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» (Գիտական հոդվածների ժողովածու) Պրակ 5, Երևան, Լիմուշ, 2008*, էջ 124-132:*
6. **Նույնականության ճգնաժամի մարդաբանական հետևանքները,** «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» (Գիտական հոդվածների ժողովածու), Պրակ 6, Երևան, Լիմուշ, 2009, էջ 47-53:
7. ***Նույնականության ճգնաժամի հաղթահարման ուղիները,*** «Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ» Գիտական հոդվածների ժողովածու, Պրակ 6, Երևան, Լիմուշ, 2009, էջ 75-89:
8. **Սոցիալական նպատակների և արդյունքների անհամապատասխանության սկզբունքը,** «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ հոդվածների ժողովածու», Պրակ 7, Երևան, Լիմուշ, 2010, էջ 64-78:
9. ***Համաշխարհայնացման պարադոքսալ հետևանքները,*** «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» (Գիտական հոդվածների ժողովածու), Պրակ 8, Երևան,Լիմուշ, 2011, էջ 13-24:

Eranuhi Manukyan

PECULIARITIES OF SOCIOCULTURAL PARADOXES IN THE CONTEXT OF SYSTEM TRANSFORMATIONS

Dissertation for the degree of PhD in philosophical sciences, under the speciality 09.00.04 “Social philosophy, ethics”

The defence of the dissertation will be held at Yerevan State University at 13.00 on 10 July, 2012 at the session of the Special Board of Philosophy and sociology 013 HAC (Yerevan, 0025, Abovyan 52a, Yerevan State University)

SUMMARY

Researches that are made in the Dissertation allow us to make following conclusions about processes, specific forms and characteristics regarding the paradoxes which has hawe taken special resonance in the period of systematic transformations.

• The social reality of Modern civilization is described by contradicting processes. On the one hand the social world becomes more integrated, unified, due to development of economic, political spheres and new types of communications. For this reason modern challenges become universal: on the other hand tendency of decentralization of the national and personal life, the possibility of the existence of sub-cultural worlds reinforce the processes of division and separation of social reality.

•Internal motives of social life are defined by social development for certain social purposes, are also defined by the natural and reasonable human needs of personal and co-existing life autonomy, needs of the expansion of freedom and by the need of making the social world more rational. But the whole history of civilization is paradoxical because as a rule there is the principle of non-compliance with social goals and their results. As history shows almost the social-political projects and concepts to have more manageable and more predictable, more rational, more regulated world cause such problems and challenges which are not only hard to understand in the same way, but these problems and challenges also are contrary of the main nature of social projects.

• The classical picture of Social reality was built on the principle of historical rationality according to which spheres of public life are developing as an agreed set and the epilogue of the history is guaranteed so as the historical drama always has a happy ending. However, as it is shown in the tendency of development of postmodernism the main point of the classical-rationalistic understanding about harmony and the modern concept of the history progress, is that it does not take into account deceit of history and always looks at the development of social life as a providential and predetermined process.

•In the context of structural transformations the understanding social – cultural paradoxes gave us a chance to illustrate and analyze current and future field of social - philosophical issues and researches. In modern life management and control of public relations and human resources are constantly transforming. The goal of social-economical, political, spiritual transformations in Western civilization, and the goal of passing from traditional society into a liberal-democratic societies is to program human behavior. In a traditional closed society government has no need to conform legitimacy of its power to influence people's consciousness as it is predicted. But in modern democratic societies the government has to use the most liberal mechanisms of massive inspiration to control people views and beliefs-- one of the goals of this is to decrease civic activity.

•The analysis of trends of development and transformation of modern civilization shows that the mechanisms of modern information indicate a certain level of knowledge and the index of human and public awareness without of which it is not possible to orient in the information space. Dissemination and exchange of information brings the evidence that in

modern societies new information systems are being implemented, which provides a high level of control.

When discussing the causes and consequences of identity crisis, the new types of anthropological man are defined in modern information civilization (vagrant, gambler, tourist). The place of self realization of these people are mass-consumer societies. On the one hand these societies are expanding circles of people's freedom and possibilities, on the other hand the public relations and dependency is growing. As a result the human mass is formed under the total control. Modern man-made civilization gives paradoxical nature to the powerful character of man. From one angle the way of modern life demands from man activity of creation and the ability to make decisions independently, from macke the other angle it makes a man easy changing attachment for institutional structures.

The same living conditions, needs and interests, standardization of production forms make same- way- thinking men and masses.

Ерануи Манукян

ОСОБЕННОСТИ СОЦИОКУЛЬТУРНЫХ ПАРАДОКСОВ В КОНТЕКСТЕ СИСТЕМНЫХ ТРАНСФОРМАЦИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук
по специальности 09.00.04. “Социальная философия, этика”.
Защита состоится 10 июля 2012 года в 13.00 на заседании Специализированного совета
013 Философии и социологии ВАК РА при Ереванском государственном университете.
(0025, г.Ереван, ул.Абовяна, д.52а, ЕГУ)

РЕЗЮМЕ

Диссертационное исследование дает возможность сделать следующие выводы о приобретающих особый резонанс парадоксах, об их течении или протекании, конкретных проявлениях и особенностях в системно-трансформационный период.

- Современная цивилизация характеризуется противоречивыми процессами социальной реальности. Появление новых видов коммуникаций, расширение социальных связей, экономические, политические и социально-культурные области развития делают социальный мир все более интегрированным, единым и однотипным, вследствие чего современные вызовы становятся общечеловеческими и универсальными. С другой стороны тенденции децентрализации национальной и индивидуальной

жизни дают возможность самодостаточного существования, а мозаичность субкультурных миров усиливает процесс разделения отдельных социумов.

- Внутренние мотивы развития социальной жизни обусловлены социально определенными целями, стабильностью и регулированностью, самоуправлением личной и совместной жизни, рациональностью социального мира и расширением границ свободы естественных и разумных потребностей человека. Однако развитие цивилизации на протяжении всей истории парадоксально по той причине, что, как правило, действует принцип несовпадения социальных целей и их результатов. Как показывает история, почти все социально-политические концепции и проекты, направленные на создание более управляемого и предсказуемого, рационального и регулируемого мира, в конечном итоге, приводят к таким проблемам и вызовам, которые не только формируют разнонаправленность восприятия, но и противоречат самой сущности социальных проектов.
- Классическая картина социальной реальности была построена на предположении исторической рациональности, согласно которой история имеет гарантированный эпилог, историческая драма всегда имеет счастливый конец, сферы общественной жизни развиваются как согласованное сообщество. Постсовременные тенденции развития показали, что и в классическо-рациональном понимании феномена гармонии, и в историческо-прогрессивных, модернистических концепциях есть важное упущение, которое заключается в том, что не принимаются во внимание “хитросплетения истории”, а развитие социальной жизни рассматривается как провиденциальный, предопределенный разумом процесс.
- В контексте структурных или системных преобразований осмысление соцкультурных парадоксов дает возможность анализировать и по-новому интерпретировать социально-философские проблемы, а также текущие и будущие границы исследований. В современном мире управление обществом, способы регуляции человеческих отношений претерпевают постоянную трансформацию. Переход от традиционно-закрытых типов обществ к свободно-демократическим формам функционирования, и протекающие в западной цивилизации процессы социально-экономических, политических и духовных преобразований имеют целью программирование и направление поведения людей в желаемое русло. В обществах закрытого типа у власти нет необходимости влиять на сознание

людей, доказывать свою легитимность, так как все заранее предопределено. Между тем в современных демократических обществах для осуществления контроля над взглядами и убеждениями людей власть вынуждена применять массовые, более либеральные механизмы внушения, целью которых является снижения гражданской активности.

- Развитие техногенных цивилизаций и анализ современных тенденций трансформации показывает, что современные средства информации предопределяют определенный уровень знаний, критерии информированности человека и общества, без которых невозможно ориентироваться в информационном пространстве. Распространение и обмен информацией доказывает, что в современном обществе протекают процессы инвестирования новых систем информирования, что предполагает высокий уровень контроля.

Обсуждая причины и последствия кризиса идентичности в условиях информационной цивилизации, нами было выделены антропологические типы современного человека (бродяга, игрок, турист, бесцельный зевака). Их основное место самовыражения--массово-потребительское общество. Последнее расширяет свободу границ и возможностей людей, с другой стороны, углубляются социальные связи и зависимости, что в конечном итоге приводит к формированию большого количества людей, находящихся под тотальным контролем. Современная техногенная цивилизация наделяет личность самостоятельной, самоуправленческой, пародаксальной природой, и это проявляется в том, что современная культура организации жизни требует творческой активности и способности самостоятельно принимать решения и личность становится легко изменяемым звеном, “приложением” институциональных структур, а с другой стороны усреднение условий жизни, стандартизация потребностей и интересов людей к производственным и бытовым условиям, образуют однотипность в мышлении, восприятии, вкусе, что способствует формированию однородной массы.